

ՄԱՍ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրության բնագավառում համագործակցությունը ներառել է տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև ներուժ ստեղծելու նպատակով՝ դրանց տարածումը վիճակագրական տվյալների հետագա օգտագործման համար: Միջազգային վիճակագրական համագործակցությունը ներառել է ինչպես միջազգային փորձագետների և աշխատանքային խմբերի այցելությունները, այնպես և համագործակցության կատարելագործմանն ուղղված համապարփակ ծրագրերը:

Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհրդի 2008 թվականի ապրիլի 29-ի կազմակերպական նստաշրջանին Հայաստանն ընտրվել է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի անդամ՝ չորս տարի ժամկետով սկսած 2009 թվականի հունվարի 1-ից:

Ծառայությունը շարունակել է ակտիվ մասնակցությունը միջազգային համագործակցության շրջանակում համաաշխարհային մասշտաբով վիճակագրական մեթոդաբանության և գործիքակազմի կատարելագործման, ներդաշնակեցման ու միասնականացման, տարբեր երկրների վիճակագրական ծառայությունների կողմից պաշտոնապես հրապարակվող տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, շրջակա միջավայրի վիճակի և բնակչության կենսամակարդակի վերաբերյալ ցուցանիշների համադրելիության ու փոխանակման ապահովման ուղղությամբ, որոնց շրջանակում Ծառայությանն է տրամադրվել նաև տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից իրականացվել են հետևյալ նախագծերը.

1. «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո.

որակի կառավարում,

բիզնես-վիճակագրության կատարելագործում,

հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ,

ազգային հաշիվների համակարգ,

գյուղատնտեսական համատարած հաշվառում,

տեղեկատվական և հեռահաղորդակցման հանրության վիճակագրություն:

2. Եվրոպական բնապահպանական գործակալության օժանդակությամբ.

ԵՀԲ-ԲՏԱՀ (Բնապահպանական Տեղեկատվական Միասնական Համակարգ) նախագիծ:

3. ԵՄ օժանդակությամբ.

ԻՆՈԳԵՅԹ միջազգային համագործակցության նախագիծ էներգետիկայի ոլորտում,

4. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

Բարձրացնել գործընկեր պետական մարմինների կարողություններն ազգային և մարզային մակարդակով «ԱրմենիաԻնֆո»-ի մեկնարկային գործարկման հարցում՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) և Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) գծով արձանագրած առաջընթացը մշտադիտարկելու և լուսաբանելու նպատակով:

5. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ.

2010, 2011, 2012 թվականներին. «ՏՐԱՆՍՄՈՆԵԵ» ծրագիր,

Մանկական աղքատություն:

6. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ.

ՀՀ 2011 թվականի մարդահամար:

7. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Ծառայության միջև ստորագրված Փոխըմբռնման Հուշագրի ներքո.

Համայնքների տեղական իրազեկման ցանցի միջոցով կանանց հանդեպ բռնությունների վերացման համար ներուժի ամրապնդում.

8. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ Հաշվառումների Բյուրոյի օժանդակությամբ.

ՀՀ 2011 թվականի մարդահամար;

9. Իտալիայի, Նորվեգիայի, Հնդկաստանի և Շվեյցարիայի կառավարությունների օժանդակությամբ.

ՀՀ 2011 թվականի մարդահամար:

10. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

2012 թվականի ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագիր ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե):

11. «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի և Ծառայության միջև ստորագրված պայմանագրի շրջանակում (Համաշխարհային բանկի խորհրդատվական օժանդակությամբ).

«Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» ենթաձրագիր:

12. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ՄԱԿԸՈ ինթերնեյշնլ ինկ. Կազմակերպության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրի օժանդակությամբ.

2010 թվականի Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտություն:

13. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ Տետրա Տեք ինկ. Կազմակերպության օժանդակությամբ.

Հայաստանի ազգային էներգետիկ հաշվեկշռի և ջերմոցային գազերի գույքագրման համակարգերի ստեղծում:

14. Աշխատանքի միջազգային կազմակերպության օժանդակությամբ.

Դպրոցից դեպի աշխատանք հետազոտություն:

15. ԵՀ/Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության օժանդակությամբ.

ԵՀԲ-ի արևելյան տարածաշրջանում պարենի ապահովման որոշումների կայացման բարելավմանն ուղղված տեղեկատվական համակարգերի ծրագիր:

Վիճակագրության զարգացման միջազգային միտումներին իրազեկ լինելու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նաև Ծառայության անձնակազմի մասնագիտական ներուժի զարգացմանը նպատակաուղղված համագործակցությունը: Ծառայության աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների, առանձին թեմատիկ քննարկումների և այլ միջոցառումների (այցեմասնակցությունների թիվը՝ 237, այդ թվում՝ 2010 թվականին՝ 62 (22 արտասահմանյան երկրում), 2011 թվականին՝ 66 (23 արտասահմանյան երկրում), 2012 թվականին՝ 109 (26 արտասահմանյան երկրում):

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և հրապարակվել է 31 զեկույց մոտ 548 էջ ընդհանուր ծավալով, (այդ թվում, 2010 թվականին՝ 9 (242 էջ), 2011 թվականին՝ 12 (164 էջ), 2012 թվականին՝ 10 (142 էջ)):

Նշվածից զատ, Ծառայության աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են նաև տարբեր կազմակերպությունների (նախարարություններ, միջազգային կազմակերպություններ և այլն) կողմից կազմակերպված 205 տեղային սեմինարների, դասընթացների, շնորհանդեսների, աշխատանքային հանդիպումների և այլն (այցեմասնակցությունների թիվը՝ 1121, այդ թվում՝ 2010 թվականին՝ 236 (61), 2011 թվականին՝ 514 (76), 2012 թվականին՝ 371 (68)):

Կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, շարունակվել են նաև Ծառայությունում պարբերաբար կազմակերպվող սեմինար-խորհրդակցություններն ու դասընթացները, ինչպես օտարերկրյա փորձագետների, այնպես և Ծառայության աշխատակիցների դասավանդմամբ և մասնակցությամբ: Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում Ծառայությունում կազմակերպվել են ընդհանուր թվով 66 սեմինար-խորհրդակցություններ, որոնց՝ Ծառայության աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 1322, այդ թվում՝ 2010 թվականին՝ 7 (103), 2011 թվականին՝ 27 (539), 2012 թվականին՝ 32 (680):

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայություն են այցելել թվով 65 հանձնախմբեր և 152 փորձագետներ (այդ թվում, 2010 թվականին՝ 6 (16), 2011 թվականին՝ 25 (62), 2012 թվականին՝ 34 (74)), ի մասնավորի.

2010 թվականին Ծառայություն է այցելել 6 հանձնախումբ, 16 փորձագետ Լատվիայի վիճակագրության կետրոնական բյուրոյից, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեից, Դանիայի վիճակագրական ծառայությունից, Ռումինիայի վիճակագրության ազգային ինստիտուտից, Հունգարիայի վիճակագրական կենտրոնական ծառայությունից, Եվրոպական կենտրոնական բանկից, Վարշավայի քաղաքապետարանից, Իտալիայի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունից՝ ծառայությունների վիճակագրության վերաբերյալ երկօրյա սեմինարը վարելու, Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի գործունեությունը և հետագա աշխատանքները ԱՊՀ երկրների հետ համագործակցության շրջանակում քննարկելու, Դանիայի վիճակագրական ծառայության հետ հետագա համագործակցության հնարավորությունները քննարկելու, «Վիճակագրական դասակարգումներ» թեմայով սեմինարը վարելու, Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» նախագծի նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու և դրա պայմանագրի նախագիծը քննարկելու նպատակով:

2011 թվականին Ծառայություն է այցելել 25 հանձնախումբ, 62 փորձագետ Դանիայի վիճակագրական ծառայությունից, Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունից, Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայությունից, Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունից, Գերմանիայի վիճակագրական ծառայությունից, Լիտվայի վիճակագրական ծառայությունից, Լատվիայի վիճակագրության կետրոնական բյուրոյից, Հնդկաստանի Սի-ԴիէյՍի ընկերությունից, ԱՄՆ-ի հաշվառումների բյուրոյից, Համաշխարհային բանկից, Ֆրանսիայի ժողովրդագրական հետազոտությունների ինստիտուտից, Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» նախագծի մեկնարկի, 2011 թվականի տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման և քննարկման համար Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակի մասնագետներին մեթոդաբանական օժանդակության

ցուցաբերման, «ՀՀ-ում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման դերն ու կարևորությունը» խորագրով սեմինարը վարելու, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» նախագծի գյուղատնտեսական համատարած հաշվառման բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» նախագծի մեկնարկի և բացման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև որակի կառավարման բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» նախագծի ազգային հաշիվների, բիզնես վիճակագրության, հարմոնիզացված սպառողական գների ինդեքսների, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրության բաղադրիչների շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, 2011 թվականի մարդահամարին օժանդակության ցուցաբերման, Ծառայության մարզային վիճակագրական գործակալությունների համար «Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նախապատրաստում» թեմայով վերապատրաստման սեմինար վարելու, «Ժողովրդագրական հիմնախնդիրները Կովկասում» խորագրով սեմինար անցկացնելու, Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության և Ծառայության միջև երկկողմանի համագործակցության հնարավորությունների և օտարերկրյա ներդրումների մեթոդաբանության համադրելիության ու տվյալների շեղումների վերլուծության նպատակով վիճակագրական դիտարկումների կազմակերպման վերաբերյալ քննարկումների (2011 թվականի դեկտեմբերի 19-ին համատեղ մշակվել և ստորագրվել է աշխատանքային հանդիպման արձանագրություն) նպատակով:

2012 թվականին Ծառայություն է այցելել 34 հանձնախումբ, 74 փորձագետ Դանիայի վիճակագրական ծառայությունից, Գերմանիայի վիճակագրական ծառայությունից, ԱՄՆ Հաշվառումների բյուրոյից, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, Թուրքմենստանի պետական վիճակագրական կոմիտեից, Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյից, Լիտվայի վիճակագրական ծառայությունից, Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունից, Արժույթի միջազգային հիմնադրամից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից (Եվրոստատ), ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, Տաջիկստանի Հանրապետության վիճակագրության գործակալությունից և Տնտեսական զարգացման և առևտրի նախարարությունից ու ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գրասենյակից, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունից, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, 2011 թվականի Հայաստանի մարդահամարի իրականացման աշխատանքների շրջանակում աջակցություն ցուցաբերելու, ԵՀ/ՊԳԿ պարենային ապահովության տեղեկատվական համակարգի հիման վրա կայացվող որոշումների բարելավմանն ուղղված ծրագրի շրջանակում հանդիպում անցկացնելու, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում»

բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, «Վիճակագրական ներուժի ամրապնդում» ծրագրի շրջանակում փորձի փոխանակման և ուսումնասիրման, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎինինգ ծրագրի «Բիզնես վիճակագրության կատարելագործում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎինինգ ծրագրի «Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի ներդրում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎինինգ ծրագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, «Միջազգային համադրումներ» ծրագրի ներքո քննարկումների, «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում» ծրագրի ներքո քննարկումների, ընթացիկ և ապագա ԵՄ ԹՎինինգ ծրագրերի, վարչական ռեգիստրների որպես տեղեկատվական աղբյուր օգտագործման և այլ հիմնահարցերի շուրջ քննարկումների, Հայաստանում վիճակագրական ներուժի ամրապնդման ընթացիկ իրավիճակի և ապագա համագործակցության շուրջ քննարկումների, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎինինգ ծրագրի «Գյուղատնտեսության համատարած հաշվառում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվության ցուցաբերման, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎինինգ ծրագրի շրջանակում ձեռնարկված PX-Web/PC-Web ներդրման հետ առնչվող հարցերի քննարկմանը մասնակցելու, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ «ԱրմենիաԻնֆո»-ի ներդրման Հայաստանի փորձի ուսումնասիրման, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության «Աջակցություն գյուղատնտեսության համատարած հաշվառմանը ՀՀ-ում» ծրագրի շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ հանդիպելու և գյուղատնտեսական համատարած հաշվառմանը վերաբերող հարցերը քննարկելու նպատակով:

Բոլոր այցելություններն եղել են արդյունավետ և դրական ազդեցություն են գործել Ծառայության աշխատանքների հետագա բարելավման և զարգացման վրա:

Ծառայությունը Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակում՝ «ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արդիականացում» ներքո. հիմնվելով ԵՄ փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա, վիճակագրական համապատասխան ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության մշակման և իրականացման, բիզնես ռեգիստրի որակի և ընդգրկման բարելավման, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցերի համաձայն գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստման և իրականացման.

ԵՀԲ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ներքո ավարտվել են աշխատանքները վիճակագրական դասակարգումների ներդրման (ԵՀ տնտեսական գործունեության տեսակների 2-րդ վերանայված դասակարգման (ՆԵՅՍ վեր. 2), վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգման (ՆԱԹՍ)), տվյալների պահպանման և վիճակագրական գաղտնիության վերաբերյալ կանոնակարգերի ներդրման ուղղությամբ: ՀՀ-ում վիճակագրական գաղտնիք ներառող տեղեկությունների դասակարգման, պահպանման և օգտագործման հետ կապված հարաբերությունների հստակ կարգավորման նպատակով «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշման մեջ կատարվել են լրացումներ և փոփոխություններ գիտական և հետազոտական հանրությանը համատարած և ընտրանքային հետազոտական գործիքների միջոցով հավաքագրվող վիճակագրական անվանագրքոված տվյալների բազաները մատչելի դարձնելու նպատակով (առանց սահմանափակումների՝ անվանագրքոված բազաներն ուղղակիորեն զետեղելով Ծառայության պաշտոնական կայքէջում):

ԵՀԲ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների միջոցառումների ներքո՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ընդգրկվելով, Ծառայությունը մասնակցել է գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման փուլերին, գործողությունների ծրագրի շրջանակում աշխատանքներ են տարվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության հետ, ԵՄ ցուցանիշների համաձայն, «միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց» վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների ցանկի ձևավորման, տվյալների ստացման ձևաչափի, պարբերականության և հաշվետվական ձևերի հաստատման շուրջ: Ավարտվել են «Անհատական սպառման դասակարգիչ ըստ նպատակների» (ԿՈՅԿՈՊ) դասակարգչի ներդրման աշխատանքները տնային տնտեսությունների հետազոտությունների և գների վիճակագրության ոլորտներում: Շարունակվել են «Աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտություն» ԵՄ կանոնակարգերի ուսումնասիրման աշխատանքները, մասնավորապես ուսումնասիրվել են 1998 թվականի մարտի 9-ի «Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 577/98 կանոնակարգը, 07/09/00 Եվրահանձնաժողովի թիվ 1897/2000/EC կանոնակարգը «Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման մասին՝ կապված գործազրկության գործառնական սահմանումների հետ Եվրոպական խորհրդի թիվ 577/98 կանոնակարգի իրականացման վերաբերյալ» և 19/07/00 Եվրահանձնաժողովի թիվ 1575/2000/EC կանոնակարգը «Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման մասին՝ կապված 2001 թվականից հետո փոխանցվող տվյալների կողավորման հետ, Եվրոպական խորհրդի թիվ 577/98 կանոնակարգի իրականացման վերաբերյալ»:

2011 թվականի հունվարի 31-ից (պաշտոնական բացման արարողությունը՝ մարտի 16-ին) Հայաստանում մեկնարկել էր «Աջակցություն Հայաստանի ազգային վիճագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ Ծրագիրը, որի նպատակն էր աջակցել Հայաստանի վիճակագրության արդիականացմանը, ԵՄ չափանիշներին մոտարկված մեթոդաբանությունների ներդրմանը, ԵՄ երկրների հետ ուղղակիորեն համադրելի վիճակագրության թողարկմանը:

Ծրագրի գլխավոր գործընկերն էր՝ Դանիայի վիճագրական ծառայությունը, կրտսեր գործընկերը՝ Գերմանիայի վիճագրական ծառայությունը, մասնակիցներն էին՝ Շվեդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունները: Ծրագիրը կավարտվի 2013 թվականի փետրվարի 28-ին:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում 2011 թվականի սեպտեմբերի 23-24-ը ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղում կազմակերպվել է «Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նախապատրաստում» վերապատրաստման սեմինար մարզային վիճակագրական գործակալությունների համար: 2011 թվականին նույն ծրագրի շրջանակում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների օժանդակությամբ կազմակերպվել են շնորհանդեսներ«Ի՞նչ է վարչական ռեգիստրը» խորագրով:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում 2012 թվականի հուլիսի 13-ին կազմակերպվել է «Հայաստանում Եվրոպական Միության Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի (ՀՍԳԻ) ներդրմանը» նվիրված սեմինար: Նույն ծրագրի շրջանակում 2012 թվականի սեպտեմբերի 14-ին կազմակերպվել է շնորհանդես «ԵՄ ծրագիրը վիճակագրությունը հասանելի է դարձնում ինտերնետում» խորագրով սեմինար, որի ընթացքում հանրությանը ներկայացվեց ARMSTATBANK.AM տվյալների նոր բազան: ARMSTATBANK.AM-ը հնարավորություն է ընձեռում վիճակագրության բոլոր սպառողներին ներբեռնել վիճակագրական տվյալներ իրենց իսկ նախընտրելի ձևաչափերով: Տեխնոլոգիայի հիմքում ընկած է օգտվողի համար շատ հարմարավետ PX-Web ծրագիրը, որը մշակվել է Շվեդիայի վիճակագրության կողմից և օգտագործվում է ավելի քան 40 ազգային վիճակագրական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ամբողջ աշխարհում: ARMSTATBANK.AM-ը թույլ է տալիս ընտրել սպառողին հետաքրքրող աղյուսակները և ցուցանիշները շատ պարզ ընթացակարգով, տրամադրում է արագ և մատչելի հասանելիություն վիճակագրական տեղեկատվությանը և հնարավորություն է ընձեռում ներբեռնել տվյալները MS Excel, xml կամ այլ ձևաչափերով, ինչպես նաև ստեղծել գծապատկերներ և աղյուսակներ, որոնք կառուցված են սպառողների պահանջների համապատասխան:

Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում, որն օգտագործում է PX-Web 2012 թվականի տարբերակը:

Հրապարակվել է «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի ներքո իրականացված «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (S&S) օգտագործումը Հայաստանի Հանրապետության նախարարություններում» փորձնական հետազոտության զեկույցը:

Ընդհանուր առմամբ, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում Ծառայությունում կազմակերպվել է 27 սեմինար-շնորհանդես ծրագրի բոլոր բաղադրիչների գծով՝ որակի կառավարում, բիզնես-վիճակագրության կատարելագործում, հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ, ազգային հաշիվների համակարգ, գյուղատնտեսական համատարած հաշվառում, տեղեկատվական և հեռահաղորդակցման հանրության վիճակագրություն, որոնց մասնակցել են Ծառայության աշխատակիցները և ներկայացուցիչներ շահառու մարմիններից ու կազմակերպություններից:

Ծառայության կայքէջում բացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» խորագրով ԵՄ Թվինինգ ծրագիր և «Փաստաթղթավորում» բաժիններում շարունակվել են զետեղվել Թվինինգ ծրագրի վերաբերյալ նյութերը և «որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում մշակված որակի հոչակագրերը՝ թվով 134 հայերեն և անգլերեն:

ԵՄ Թվինինգ գործիքի ներքո մշակվել և ներկայացվել են հետևյալ ծրագրային առաջարկները.

1. «Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ամրապնդում. տեղեկատվության տարածում, ժողովրդագրական վիճակագրության, աշխատանքի շուկայի վիճակագրության, աղքատության վիճակագրության, գիտության և տեխնիկայի վիճակագրության բարելավում, շրջակա միջավայրի վիճակագրության բարելավում» խորագրով ծրագիր,

2. «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ» խորագրով ծրագրի շրջանակում տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման ինտեգրացված վիճակագրական տեղեկատվական համակարգի ստեղծման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող ԹԱՅԵՔՍ ծրագրի շրջանակում Ծառայությունն իրականացրել է մասնակցություն «Նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ վիճակագրության համար» խորագրով գիտաժողովին (2011 թվական), «Վիճակագրությունը և փաստերի վրա հիմնված որոշումների

կայացումը» խորագրով սեմինարին (2012 թվական) և «Տրանսպորտի վիճակագրություն» թեմայով ուսումնական այցելություն (2012 թվական):

2010 թվականին մշակվել է ԴԵՎԻՆՖՈ 6.0/ԱՐՄԵՆԻԱԻՆՖՈ տվյալների բազան և զետեղվել www.armdevinfo.am կայքում հայերեն և անգլերեն, որը պաշտոնապես գործարկվել է 2010 թվականի սեպտեմբերի 10-ից: 2011 թվականի «ԱրմենիաԻնֆո» ծրագրի շրջանակում www.armdevinfo.am կայքում զետեղված «ԱրմենիաԻնֆո» տվյալների բազան համալրվել և ընդլայնվել է մի շարք մարզային մակարդակի ՀՁՆ ցուցանիշներով և սոցիալ-տնտեսական ցուցանիշներով՝ ըստ հանրապետության և մարզերի, իսկ 2012թ. համալրվել և ընդլայնվել է մի շարք աղքատության ցուցանիշներով, մասնավորապես մանկական աղքատության, ինչպես նաև արդիականացվել են ՀՁՆ ցուցանիշների և սոցիալ-տնտեսական ցուցանիշների բազաները:

ՀՀ վեց մարզերում՝ Լոռի, Տավուշ, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք, Ծառայության և մարզպետարանների աշխատակիցների համար 2011 և 2012 թվականներին կազմակերպվել են «ԱրմենիաԻնֆո - տվյալների բազա սպառողների համար», ինչպես նաև նոր տվյալների բազա ստեղծելու հմտությունների տիրապետման ուսուցման դասընթացներ:

2011 թվականին մշակվել և հրապարակվել է «ԱրմենիաԻնֆո - տվյալների բազա սպառողների համար» ձեռնարկը, որը տեղակայված է www.armstat.am կայքէջում:

«ԱրմենիաԻնֆո» ծրագրի շրջանակում Ծառայության դահլիճում կազմակերպվել են շնորհանդեսներ սպառողների՝ բուհերի և նախարարությունների ներկայացուցիչների համար:

2012 թվականին ՀՀ վեց մարզերում՝ Լոռի, Տավուշ, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք «ԱրմենիաԻնֆո» ծրագրի շրջանակում մշակվել և ներդրվել են համայնքների մակարդակով որոշ վիճակագրական ցուցանիշների փորձնական տվյալների բազաները:

2012 թվականին վիճակագրական ներուժի ամրապնդման բնագավառում և «ԴԵՎԻՆՖՈ/ԱրմենիաԻնֆո» ծրագրի ներդրման ու գործարկման Հայաստանի փորձի ուսումնասիրման նպատակով Ծառայության այցելած Թուրքմենստանի պետական վիճակագրական կոմիտեի (Համաշխարհային բանկի ֆինանսական օժանդակությամբ) և Տաջիկստանի Հանրապետության (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) ֆինանսական օժանդակությամբ) պատվիրակությունների համար Ծառայության դահլիճում կազմակերպվել են շնորհանդեսներ:

2010 և 2011 թվականներին Ծառայությունն իրականացրել է Եվրամիության Վիճակագրական Ծառայության (Եվրոստատ) «Վիճակագրության և դրա հետ կապված տեղեկատվության հավաքագրում, հիմնավորում և հրապարակում թեկնածու երկրներից, պոտենցիալ թեկնածու երկրներից և Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներից» խորագրով նախագիծը:

2012թ. Ծառայությունն իրականացրել է Եվրոստատի «Վիճակագրական տվյալների հավաքագրում Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան (ENP-EAST) երկրներից» խորագրով նախագիծը:

Ծառայությունը վիճակագրության մասով մասնակցել է ՀՀ-ԵՄ Ասոցիացման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար ստեղծված բանակցային գործընթացի շրջանակում գործող տնտեսական, ֆինանսական և ոլորտային համագործակցության հարցերի խմբի աշխատանքներին:

Ծառայությունը վիճակագրության մասով մասնակցել է ՀՀ-ԵՄ համագործակցության առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի աշխատանքներին:

Ծառայությունը մասնակցել է ՀՀ-ԵՄ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման շուրջ բանակցությունների շրջանակներում ձևավորված «Ապրանքների առևտուր» և «Մաքսային հարցեր և առևտրի դյուրացում» ոլորտային աշխատանքային խմբերի աշխատանքներին՝ որպես «Ապրանքների առևտուր» բանակցային խմբի անդամ:

Ծառայությունը մասնակցել է Եվրոստատի կողմից կազմակերպված Վիճակագրական Համագործակցության համար ԵՀԲ-Արևելքի 2014-2020 թվականների ռազմավարության համար աշխատանքային խմբի և փաստաթղթի մշակման աշխատանքներին:

Անցած ժամանակահատվածում Ծառայության կողմից իրականացվել են բանակցություններ և քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ: Ի մասնավորի

2010 թվականին Համաշխարհային բանկի, Բուլղարիայի ազգային վիճակագրական ծառայության, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության, Ավստրիայի վիճակագրական ծառայության, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի փորձագետների, Իտալիայի, Նորվեգիայի, Հնդկաստանի և Շվեյցարիայի կառավարությունների ներկայացուցիչների հետ՝ ՀՀ 2011 թվականի մարդահամարին օժանդակելու վերաբերյալ, Համաշխարհային բանկի փորձագետների հետ TFSCB դրամաշնորհի շրջանակում, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի և ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում գյուղատնտեսության համատարած հաշվառման վերաբերյալ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետների հետ՝ «ԴԵՎԻՆՖՈ/ԱՐՄԵՆԻԱԻՆՖՈ» ծրագրի իրականացման, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետների հետ՝ «Մանկական աղքատություն» և ՏՐԱՆՍՄՈՆԵԵ ծրագրերի, Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների հետ՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի

շրջանակում «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» նախագծի իրականացման և հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) փորձագետների հետ՝ ՀՀ-ԵՄ Ասոցիացման համաձայնագրի բանակցային գործընթացի շուրջ:

2011 թվականին Դանիայի վիճակագրական ծառայության, Գերմանիայի վիճակագրական ծառայության և Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչների հետ՝ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» նախագծի շրջանակում իրականացվելիք գործողությունների շուրջ, Բուլղարիայի ազգային վիճակագրական ծառայության, Գերմանիայի վիճակագրական ծառայության, Էստոնիայի վիճակագրական գրասենյակի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) փորձագետների հետ ՀՀ 2011 թվականի մարդահամարին օժանդակելու վերաբերյալ և հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում համատարած գյուղատնտեսական հաշվառմանը և ՀՀ 2011 թվականի մարդահամարին խորհրդատվական օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի ներկայացուցիչների հետ՝ ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների շուրջ, Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ՝ միջազգային համադրումների ծրագրով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությանը մեթոդաբանական օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ներկայացուցիչների հետ՝ ՀՀ-ԵՄ Ասոցիացման համաձայնագրի և «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում իրականացված գործողությունների շուրջ, Մոլդովայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես գյուղատնտեսական համատարած հաշվառման բնագավառում, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Համաշխարհային բանկի (TFSCB դրամաշնորհի շրջանակում), ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության, Իտալիայի, Նորվեգիայի, Հնդկաստանի և Շվեյցարիայի կառավարությունների ներկայացուցիչների հետ՝ ՀՀ 2011 թվականի մարդահամարին օժանդակելու վերաբերյալ, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի և ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման վերաբերյալ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետների հետ՝ «ԴԵՎԻՆՖՈ/ԱՐՄԵՆԻԱԻՆՖՈ» ծրագրի իրականացման, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետների հետ՝ «Մանկական աղքատություն» և ՏՐԱՆՍՄՈՆԵԵ ծրագրերի շուրջ:

2012 թվականին Դանիայի վիճակագրական ծառայության, Գերմանիայի վիճակագրական ծառայության, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ներկայացուցիչների հետ՝ «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում իրականացվելիք գործողությունների շուրջ, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, ԱՄՆ Գյուղատնտեսության Դեպարտամենտի, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության, Ավստրիական զարգացման և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունների, Մոլդովայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառմանը ֆինանսական և խորհրդատվական օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչների հետ՝ Համաշխարհային բանկի ֆինանսական օժանդակությամբ իրականացվող «ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից անձնակազմի վերապատրաստման ծրագրի» շուրջ, Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի ներկայացուցիչների հետ՝ ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ, Նորվեգիայի և Բուլղարիայի ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչների հետ՝ 2011 թվականի հոկտեմբերի 12-21-ն իրականացված ՀՀ մարդահամարի, մարդահամարների անցկացման և բնակչության ռեգիստրների ձևավորման փորձի ուսումնասիրման վերաբերյալ, Համաշխարհային բանկի և Թուրքմենստանի պետական վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչների հետ՝ Համաշխարհային բանկի ֆինանսական օժանդակությամբ վիճակագրական ներուժի ամրապնդման բնագավառում Հայաստանի փորձի ուսումնասիրման նպատակով Թուրքմենստանի պետական վիճակագրական կոմիտեի պատվիրակության 2012 թվականի մարտի 12-16-ը Ծառայություն այցելության վերաբերյալ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) ներկայացուցիչների հետ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) ֆինանսական օժանդակությամբ «ԴԵՎԻՆՖՈ/ԱՐՄԵՆԻԱԻՆՖՈ» ծրագրի ներդրման ու գործարկման Հայաստանի փորձի ուսումնասիրման նպատակով Տաջիկստանի Հանրապետության պատվիրակության 2012 թվականի սեպտեմբերի 16-22-ը Ծառայություն այցելության վերաբերյալ, Վրաստանի ազգային վիճակագրության ներկայացուցիչների հետ՝ Համաշխարհային բանկի ֆինանսական օժանդակությամբ Միջազգային համադրումների ծրագրով Ծառայության կողմից Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակին մեթոդաբանական օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ, ինչպես նաև 2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը Հայաստանում իրականացված մարդահամարի փորձն ուսումնասիրելու նպատակով Ծառայության կողմից Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակին մեթոդաբանական օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ, Սերբիայի վիճակագրական գրասենյակի ներկայացուցիչների հետ՝ համագործակցության հնարավորությունների շուրջ, Դանիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչների հետ՝ ԵՄ Թայեքս գործիքի ներքո տրանսպորտի վիճակագրության Դանիայի փորձն ուսումնասիրելու և խորհրդատվություն ստանալու նպատակով Ծառայության փորձագետների Դանիայի վիճակագրական ծառայություն այցելության վերաբերյալ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի

փորձագետների հետ՝ «ԴԵՎԻՆՖՈ/ԱՐՄԵՆԻԱԻՆՖՈ» ծրագրի իրականացման, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետների հետ՝ «Մանկական աղքատություն» և ՏՐԱՆՍՄՈՆԵԵ ծրագրերի շուրջ:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում 2011 թվականի մարդահամարի անցկացմանն օժանդակելու նպատակով Ծառայության կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության հնարավոր դոնորների ցանկի, համապատասխան գրությունների, նամակների, նյութերի մշակման և թարգմանչական աշխատանքներ:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում 2014 թվականին ՀՀ-ում գյուղատնտեսական համատարած հաշվառման (փորձնականը՝ 2013 թվական) անցկացմանն օժանդակելու նպատակով Ծառայության կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության հնարավոր դոնորների ներգրավման, ծրագրային առաջարկների, համապատասխան գրությունների, նամակների, նյութերի մշակման և թարգմանչական աշխատանքներ:

Ծառայության միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացրել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ (թվով 3275, այդ թվում՝ 2010 թվականին՝ 1039, 2011 թվականին՝ 1002, 2012 թվականին՝ 1232): Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր, որոնք համալրել են Ծառայության բաց գրադարանի ֆոնդը:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 471 պաշտոնական հանդիպումներ (այդ թվում՝ 2010 թվականին՝ 146, 2011 թվականին՝ 177, 2012 թվականին՝ 148), որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Վեհաժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 20-ը Վիճակագրության Համաշխարհային օր հռչակելու և այն առաջին անգամ տոնելու կապակցությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ մամուլի հաղորդագրության, պաստառների, այլ նյութերի մշակման, խմբագրման և միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

2010- 2012 թվականների ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում Ծառայության կողմից լույս է ընծայվել 8 հրապարակում, 16 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 607 հարցումների՝ համապատասխանաբար:

2010 թվականին՝ 2 հրապարակում, 3 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 229 հարցումների,

2011 թվականին՝ միջազգային համագործակցության շրջանակում Ծառայության կողմից լույս է ընծայվել 3 հրապարակում, 5 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 178 հարցումների,

2012 թվականին միջազգային համագործակցության շրջանակում Ծառայության կողմից լույս է ընծայվել 3 հրապարակում, 8 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 200 հարցումների: